ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկանաւոր համար տարեկան 5 ֆր. և կամ 2 րբլ. ոս. Թղթդրմ. Ուրիշ ամէն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 ֆր., վեցամսեայն 10 ֆրանգ և եռամսեայն 5 ֆրանգ։

Բաժնեգիրները կանխիկ կը վճարուին և Տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով· M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Ը ՏԱՐԻ ԹԻՒ 20

1892 ՀՈԿՏԵՄԲԵՐ 26

ՀՈԿՏԵՄԲԵՐ 14 (Հ. Տ.)

ՏՈՒՐՔԱՍՏԱՆ

Կրհրատարակութիւն Դէպ. և Երթ. օրեր

ՊԱՏՄԱԶՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կրհրատարակէ իրեն ղրկուած գրութիւններն։

Պարտաւոր չէ վերադարձնելու չհրատարակուած ձեռագիրն։

Պատուոյ ճեր կրնդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուներէ։

Պատուհասն 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ· 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՏՈՑ ՀԱՅԲԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՆԳԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Շարունակ կաճուցագրեն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգումներ մտցնելու Թիւրքահայաստանի մէջ, հայ ժողովրդի տեղական պէտքերուն համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր հայաստանի թշուառութեան և ուերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամէն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներուն համեմատ. կաշխատի ներքին այժ զօրացնել Ազգին մէջ իւր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նպաստ ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիրը որ, բացի զանազան լուրեր տալէ իրրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարաբնակ հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։ (*)

Ծանօթ. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակցիլ կամ թղթակցիլ ուզողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian
(FRANCE) Marseille

(*) «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպաստէ Ամերիկա լրագրի հրատարակմանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընկերութիւններ.—Նամակ Թիւրքիահց (Վան).—Մի բրքական դատարանի վճիռը.—Թրքական խստութիւններ.—Առ հայ պատանիսի (ոտանաւոր).—Հայեր ի Պարսկաստան.—Նեստորականք եւ Քաղդէացիք.—Ռուսօ-բրքական բանակցութիւններ.—Ծանուցում.—Կրետական շարժում.—Ձիզուիտների գեներալը.—Ծանուցումներ.—Բանասիրական (Ոդղոսթեան տեսչ)։

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր մէջ ինչպէս կրթական, բարեգործական, նոյնպէս ալ հայրենասիրական ընկերութիւններ շատ շատ կը կազմուին, եռանդով ալ գործի կը սկսուի, առաջին ամիս և երբեմն ալ առաջին տարին անդամավճարներն ալ կանոնաւորապէս կը հաւաքուին. բայց յետոյ ջանքերը կըսկսին արագ արագ թուլնալ, դրամի վճռեր կըծագին, ընկերութիւնը արբանքին չհասած կ'հիւանդանայ, կը մեռնի՝ մի քանի տարի և շատ անգամ ալ մի քանի ամիս ապրելէ ետք. և այդ վաղաժամիկ բոյսերի թողած հետքն ալ անվաստահութիւն և պաղութիւն կը լինի։

Ընկերութիւնների այսպէս դիւրաբեկութիւնն և շուտով ալ չորնալը կառաջ կերպով ջրում են, տեղերական միութիւն հաստատելու համար հրապարակ են եկած. դրանք ուզում են բառերի հետ խաղալ և մինչեւ այժմ ուրիշների գործածած բառերը հնացած և փտած կարծելով, աշխատում են մի նոր բառ գտնել որով կարողանան աշխարհ և մարդիկ զարմացնել. գտնում են և բերում «Տիեզեր» բառը և առաջարկում են որ այդ բառով միութիւն լինի։ Բայց ցաւալի է որ այդ Տիեզերական Միութեան նախագահը (մեզայ Աստծոյ) երեւում է թէ բնաւ չէ հասկանում իր միացուցել ձեռնարկած Տիեզերքի վիճակը և մինչեւ այժմ էլ չէ ցոյց տալիս Տիեզերքը միացընելու համար իր ունեցած այժը, կարողութիւնը և միջոցները. մի խօսքով, շատ ծածկուած է խօսում և աշխարհին սարսափեցնում. բայց միայն մի բան է հասկացնում և այն է որ բոլորը իրեն հետ միանան (մեզայ Աստծոյ), իրեն լսեն և հնազանդին. սակայն կը խնդրենք որ այդ Տիեզերաց միաւորիչը աշխատէ առաջ այս ինչ ամենափոքր դիւղի երկու երեք կուսակցութիւնները միացնել, միակարծիք և միագործ չինել, յետոյ սկսել և ձեռնարկել «Տիեզերական միութիւն» մը յառաջ բերելու, և եթէ այս ինչ գիւղը շատ հեռու է իրանից, թող աշխատէ նախ իր բնակած քաղաքում ուր 300 հայ չկայ և 3 հայերէն լրագիր կըհրատարակուի տարրեր և իրար հակառակ ուղղութիւններով, ամբողջ հայ գաղթականութիւնը միացնել, միակարծիք, միաբան և միասիրտ չինել. եթէ այդ անկարելի է բնականապէս, ուրեմն բնականապէս օրքան անկարելի է տիեզերքի վրայ ցրուած մի քանի միլիոն ժողովրդի կարծիքները, գաղափարները, միտքերը, բնութիւնները որ իրար հակառակ են, ամենքն ալ միացնել։ Մովսիսական յեղափոխութեան ժամանակ, Տիեզերակալ և Ամենակարողն Աստուած ամէն կերպ միջոցներ գործադրեց Իսրայէլի մի քանի հարիւր հազարից բաղկացած ազգը միացնել, միակարծիք և միասիրտ անել Քանան երկիրը ժառանգելու և նրա օրհնութիւնները վայելելու համար. անկարելի եղաւ, քառասուն տարի նրանց չուռ ածեց դաշտերը, լեռները և ձորերը որ գուցէ ուղղուեն և շատ անգամ ալ սէր, համակրանք ու հայրական գութ ցոյց տուեց, դարձեալ անկարելի եղաւ մինչեւ որ բոլոր ազգը մեռաւ և փճացաւ դաշտերում առանց Քանան մտնելու և այդ ազգից միայն երկու հոգի, Յեսուն և Քաղեբը, մտան Քանան Իսրայէլի նոր սերնդին հետ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕԴՂՈՍԹԵԱՆ ՏԵՍՉ

(Շար. 19րդ բուհճ)

«Մինչեւ Տիեզերական Միութիւն չլինի, գործերը ո՛չ կուղղուեն և ո՛չ էլ յառաջ կը գնան», ասում են ոմանք և պահանջում էլ են։

Զգիտեմ թէ արդեօ՞ք մեզանից ոմանք որ այսօր սկսած են «Տիեզեր» բառը գործածել և նրան մտցուցանել հայենական խնդրին վերաբերող գործոց մէջ և ուզում են մեր Միութեան գործոց բառագլուխը դնել, այդ «Տիեզեր» բառի բուն նշանակութիւնը հասկացե՞ր են, արդեօք չափա՞ծ են այդ բառի իմաստի ընդարձակութիւնը և թէ արդեօք մինչեւ այսօր կարելի եղե՞լ է տիեզերքի վրայ եղեան եկած ամեն կարծիքները մի ամանում ամփոփելով և մի ձեռքի տակ պահելով չթողուլ որ անկէ դուրս ուրիշ կարծիք գանուի։ Կոյրը ասաց. «Ես աւազները կարող եմ վառօդի հատիկներից որոշել և զատելով մի կողմ դնել». միւսը ասաց. «Բաւական է եթէ զգուշանաս որ առջեւիդ մեծ փոսը չընկնես»։ Այսօր մեզանից նրանք որ նոյն իսկ իրենք իրենց հետ հաշտուել և միաբանուել կարող չեն, որ իրենց երեկուայ կարծիքը այսօր հա-

լուն գլխաւոր պատճառն այն է որ այդ մարդ մենք ընկերութիւններ կազմողներն առհասարակ նախ իրենք չեն գիտեր թէ ի՞նչ բան ընելու համար կը կազմեն ընկերութիւնը և չեն ալ քններ թէ իրենց կանոնագրի ճակատը դրած նպատակը գործադրելու համար իրենք կարող մարդի՞կ են, այնքան այժ (նիւթական թէ մտաւորական) ունի՞ն իրենք. ուստի և մեքենապէս մի կանոնագիր կը լինեն կամ կօրինակեն և ընկերութիւնը կազմուած կը համարուի։

Այդ ընկերութիւններ սովորապէս ցուցամոլութեան, մեծամեծ հեռուներու փափաքի կամ վայրկենական եռանդի արդիւնք լինելով, հիմնադիրները կաշխատին իրենց այնպիսի մի անուն դնել և այնպիսի մի նպատակ նշանակել որ ինչքան կարելի է չքեղ և մեծահնչիւն լինի և ամեն գործ իր մէջ ամփոփէ։ Այսպէս, չնայելով որ հայրենասիրական ասպարէզի մէջ բազմաթիւ և տեսակ տեսակ աշխատութիւններ կան որոնցմէ միայն մէկը գործադրելու համար մի փոքր ընկերութեան այժը հազիւ կը բաւէ, ընդհակառակն կը տեսնես որ մեր ամենափոքրիկ հայրենասիրական ընկերութիւնն ալ իր ծրագրի մէջ այդ ամեն աշխատութիւններ ալ նշանակած է, կարծելով թէ ծրագիրը որքան խոշոր լինի այնքան ալ իր գործունէութիւն մեծ կը լինի. բայց եկուր տես որ լայնածաւալ ծրագիրներուն մէջ նոյն իսկ ընկերութիւնը կը կորսուի։

Այդ տեսակ ընկերութիւնների իրը մի նմոյշ դնենք հետեւեալը. *** քաղաքի Հայերէն 10–15 երիտասարդներ որոնք հազիւ թէ մի քիչ գրել կարդալ գիտեն և շաբաթական ½ ֆր. տուրք վճարել կրնան, ընդհանուր եռանդէ մղուելով հայրենասիրական ընկերութիւն մը կը կազմեն՝ իրենց ծրագրի մէջ դնելով կամաւորներ ղրկել, ասպատակային խումբ կազմել, Հայաստան ղէնք մտցունել, եւն. եւն.։ Առաջին եռանդին մէջ կելնեն իրենց մուտքերը և տարեան բոլոր շաբաթականները կանխիկ կը վճարեն և այդ պատրաստ դրամով իրենցմէ մէկը կամաւոր կը ղրկեն որ երթայ տեղ պատրաստէ և զիրենք ալ կանչէ. կամաւորը ճամբայ կելնէ և ժամանակէ մ'ետք կը վերադառնայ, անօգուտ պատճառ մ'անելէ և ընկերների առաջին եռանդի բոլոր արդիւնք սպառելէ ետք. անդամներն ընկերութեան բո-

կառավարութիւնը հաստատելու համար հրապարակ են եկած. դրանք ուզում են բառերի հետ խաղալ և մինչեւ այժմ ուրիշների գործածած բառերը հնացած և փտած կարծելով, աշխատում են մի նոր բառ գտնել որով կարողանան աշխարհ և մարդիկ զարմացնել. գտնում են և բերում «Տիեզեր» բառը և առաջարկում են որ այդ բառով միութիւն լինի։ Բայց ցաւալի է որ այդ Տիեզերական Միութեան նախագահը (մեզայ Աստծոյ) երեւում է թէ բնաւ չէ հասկանում իր միացուցել ձեռնարկած Տիեզերքի վիճակը և մինչեւ այժմ էլ չէ ցոյց տալիս Տիեզերքը միացընելու համար իր ունեցած այժը, կարողութիւնը և միջոցները. մի խօսքով, շատ ծածկուած է խօսում և աշխարհին սարսափեցնում. բայց միայն մի բան է հասկացնում և այն է որ բոլորը իրեն հետ միանան (մեզայ Աստծոյ), իրեն լսեն և հնազանդին. սակայն կը խնդրենք որ այդ Տիեզերաց միաւորիչը աշխատէ առաջ այս ինչ ամենափոքր դիւղի երկու երեք կուսակցութիւնները միացնել, միակարծիք և միագործ չինել, յետոյ սկսել և ձեռնարկել «Տիեզերական միութիւն» մը յառաջ բերելու, և եթէ այս ինչ գիւղը շատ հեռու է իրանից, թող աշխատէ նախ իր բնակած քաղաքում ուր 300 հայ չկայ և 3 հայերէն լրագիր կըհրատարակուի տարրեր և իրար հակառակ ուղղութիւններով, ամբողջ հայ գաղթականութիւնը միացնել, միակարծիք, միաբան և միասիրտ չինել. եթէ այդ անկարելի է բնականապէս, ուրեմն բնականապէս օրքան անկարելի է տիեզերքի վրայ ցրուած մի քանի միլիոն ժողովրդի կարծիքները, գաղափարները, միտքերը, բնութիւնները որ իրար հակառակ են, ամենքն ալ միացնել։ Մովսիսական յեղափոխութեան ժամանակ, Տիեզերակալ և Ամենակարողն Աստուած ամեն կերպ միջոցներ գործադրեց Իսրայէլի մի քանի հարիւր հազարից բաղկացած ազգը միացնել, միակարծիք և միասիրտ անել Քանան երկիրը ժառանգելու և նրա օրհնութիւնները վայելելու համար. անկարելի եղաւ, քառասուն տարի նրանց չուռ ածեց դաշտերը, լեռները և ձորերը որ գուցէ ուղղուեն և շատ անգամ ալ սէր, համակրանք ու հայրական գութ ցոյց տուեց, դարձեալ անկարելի եղաւ մինչեւ որ բոլոր ազգը մեռաւ և փճացաւ դաշտերում առանց Քանան մտնելու և այդ ազգից միայն երկու հոգի, Յեսուն և Քաղեբը, մտան Քանան Իսրայէլի նոր սերնդին հետ։

«Ինչո՞ւ Հայոց Հայրենասիրական Մի-

Հրատ. Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի։ Տպագրված է 1000 օրինակ։ Պատվեր 92։ 18/30 տպ. մամուլ։ Ք. Ե.

ԴԱՍԱԿԱՆ ՖԻԶԻԿԱ

(Փորձեր)

Ներկայացնում ենք մեր ընթերցողներին ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի մի քանի հարցերի մասին ուսումնական փորձերի նկարագրությունները։ Այդ փորձերը կատարվել են Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի կաբինետում։

Ա. Ա. Ա.

Ա. Ա. Ա.

Ա. Ա. Ա.

կան վերադարձած Հայերին դարձեալ պանդխտելու կը մղեն։ Դպրոց, առաջնորդարան, ազգային վարչութիւն չեզեալ վիճակի մէջ կը գտնուին։

ՍՈՒ ՀԱՑ ՊԱՏՄԱՆԻՆ

1. Ասա՛ ինձ, դաս ո՞ւստ,
Հրաշէն դրած յուշդ,
Լեռնէն ի վերուստ,
Վրդոված ներքուստ։
2. Արդեօք չարդեցի՞ը
Թշնամեայ ջոկը,
Ցանեցի՞ը ի ցիր,
Դարձուցի՞ը մոխիր։
3. Սարսափ, արհաւիր
Պատեն մեր երկիր,
Ջունխիք անպատիր
Օգնող համակիր։
4. Սուտ են և նանիր
Խոստմունք սիրալիր
Սրանց թագակիր.
Հայեր չեն չահիր։
5. Դու մի՛ վհատիր,
Սիրա ա՛ռ, քաջացի՛ր,
Ոտնիս գինակիր
Ընկերք ուխատիր։
6. Եղի՛ր միշտ անվախ,
Պատանի՛դ չքնաղ.
Արդ ժամ է, չէ՛ վաղ,
Մի՛ լինիր դանդաղ։
7. Փութացէ՛ք ի գաշտ
Գառ մարտին ի յաշտ,
Թշնամւոյն անհաշտ
Ջարդեցէ՛ք, օ՛ն, վաշտ։
8. Հրաշինուց ձեր մէտ,
Ազգանց սուր նետ
Թո՛ղ փողոտին վէտ,
Հասէ արեան գետ,
9. Փոխան այնց արեանց
Մեր հարց և մեր մարց,
Մեր քերց և եղբարց,
Քաղցրիկ զաւակաց,
10. Որք բարբարոսաց
Անգութ ականաց,
Դաման ամէնանց,
Զոհ են աւարաց։
11. Եթէ հայ գինուոր
Ընկնի վիրաւոր,
Չէ նա մենաւոր,
Կան անդ մերձաւոր։
12. Կանայք բիւրաւոր,
Հարսունք քոջաւոր,
Դստերք հարկեւոր
Բառնան վիրաւոր։
13. Հայ ակնոյց ձեռքեր
Պատեն ձեր վէրքեր,
Հարանեկան քոյրեր
Են վիրակապեր։
14. Ջե՛ն այլ պէտք շղարշ.
Քանի՛ գլխաքարշ,
Սրախո՛ք աղէկարշ
Ասել միշտ վա՛շ վա՛շ։
15. Ոտնին նկարէն
Հիւսուած ոսկեղէն,
Ի զարդ քալզէն
Կախեն ձեր կրծքէն։
16. Պատանի՛դ Հայոց,
Մինչեւ ցե՞րբ վայոց
Լսել մեր ողբոց
Զայներ զերթ բուոց։
17. Փութա ի կրկէս
Մարտին յաստպարէզ,
Թշնամին պիղծ վէս
Կուանել դէպ առ դէզ։
18. Թո՛ղ հոսի արիւն,
Բառնա՛ն ճիչ լալիւն,
Ոռնա՛ն գերթ կորիւն,
Տեսնեն զօր մահուն։
19. Տեսնե՛ն անկենդան
Զինքեանս ի կործան.
Մ՛ոչ թէ կատանան
Վատութեանց փոխան։
20. Նոքա մեզ համար
Զթողին տաճար
Եւ ոչ սրբավայր,
Սուին զայնս յատար։
21. Թշնամեաց բռունք
Խլեն մեր աղխունք,
Փեսաւէր հարսունք,
Տիկնայք վաւիկասունք։
22. Մուսա, վայրագ Քուրդ,
Պիղծ կրնչ յագուրդ
Զոհէ վատաբար
Հայոց կիւլիւղար։
23. Ծաղր և ծանակ
Բնաւից յառակ
Դնեն նշաւակ
ԶԱզգս մեր համակ։
24. Քանի՞ մի լռենք.
Աւե՛թ է, Հայ ենք.
Վրէժներս առնենք
Ապա թէ մեռնենք։
25. Յայնժամ թո՛ղ փողեր
Հնչեն նուագներ,
Յնծալեան ձայներ,
Թ՛ազատ են Հայեր։

1889 դեկտ. 30
Դավրէժ Ա. ԳՆՈՒՆԻ (1)
(Ստեփաննոս Եպ. Մխիթարեան)

ՀԱՑԵՐ Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Դավրէժէն հեռագիրէ ամսուր լուրեր կը հասնին մեզ։ Քաղաքի երկու հայաբնակ թաղերէն ջոկ ջնացած են քօլերային 82 Հայեր։ Այդ զոհերի մէջ են օ՛չ միայն Գեր. Առաջնորդը, այլ և երկու ուսուցիչներ Արամեան վարժարանին։ Կոմկոմի թերթերը ծանուցին արդէն Արամեան վարժարանի ուսուցիչներէն Թիֆլիզցի Պր. Կոստանդին Տէր Ասատուրեանի մահը որի որբերը թշուառ վիճակի մէջ մնացած են այժմ Թիֆլիզ։ Դավրէժէն սեպտ. 22/4 հոկտ. թուով մեզ գրուած մի նամակէ կը տեղեկանանք նաեւ որ նոյն վարժարանի ուսուցիչներէն մի ուրիշ եւս կը գտնուի քօլերայի զոհերուն մէջ, կարնեցի Պր. Գաւրոտ փիլոսեան որ երկար ժամանակէ ի վեր բնակութիւն հաստատած էր Դավրէժ և այնտեղի վարժարանի հաստիկրեալ ուսուցիչներէ մին էր։ Հանգուցեալը կը թողու 4 արու զաւակներ որոնք, աւելորդ է ասել, թշուառ դրութեան մէջ կը գտնուին այժմ ո-

(1) Այս ոտանաւորը որ 1890 յունվար 31/12 փետրվարի Արմենիայի (Ե տարեշրջան 50րդ թիւ) մէջ հրատարակուած է Ա. Գնունի կեղծ ստորագրութիւնով, աւելորդ չենք համարիր այսօր վերստին հրատարակել բուն իսկ հեղինակին, հանգուցեալ Սահակեան եպիսկոպոս Մխիթարեանի, ստորագրութեամբը որով Գեր. հեղինակի զգացմանը հետ և իր գրչի արդիւնքներէ մին ծանօթացուցած կը լինինք մեր ընթերցողներուն։ Ափսո՛ս որ մեր ազգ տարաժամ և չատ շուտ զրկուեցաւ մի այսպիսի հայ եկեղեցականէ որի յիշատակը անմոռաց պէտք է մնայ մեր մէջ։ ԽՄԲ.

րովհետեւ դժբաղդաբար այդ է այժմ մեր ազգի մէջ հայ ուսուցչի և գործչի վիճակը։ Անոնք որ ապահով ներկայ չունին և ստիպուած են հազարումի դժուարութիւններէ դիմադրելով օրը օրին ապրիլ, ի՞նչպէս կրնան փոքր ի շատէ ապահոված լինել վաղուանը, իրենց ապագայն . . . : Տգեղ մահմատականներին մէջ անդամ ուսուցիչը պատուաւոր և նախանձելի դիրք ունի. իսկ քաղաքակրթութեամբ պարծեցող Հայերի՞ս մէջ . . . :

ՆՆՋՈՐԱԿԱՆՔ ԵՒ ՔԱՂԴԵՑԻՔ

Արեւելքի հոկտ. 6/18ի թուին մէջ կը կարդանք հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնը .

Նեստորականք և քաղդեացի կաթոլիկք նոյն ժողովուրդն են : Մար Շիմուն Պատրիարքին հին նեստորական եկեղեցւոյն ներկայացուցիչն է, բայց բարոյական և նիւթական շատ խեղճ պայմաններու մէջ ապրող լեռնաբնակ կամ դաշտաբնակ հասարակութեան մը տեսակ մը ցեղային պետն է հոգեւոր : Նոյն լեզուն խօսող և նոյն ցեղին պատկանող Քաղդեացիներու կամ կաթոլիկ Քիլտանիներու հոգեւոր գլուխն է Տէր Իլիա : Անցեալները ֆրանսերէն կրօնական թերթէ մը առնելով Արեւելքի մէջ ծանուցած էինք թէ Նեստորականք եւս կաթոլիկութիւն ընդուներ են իրենց Պատրիարքին միջոցաւ :

Այս լուրն Արեւելքի Պաղտատցի ընթերցողաց միոյն աչքին զարկած ըլլալով, անոր հետաքրքրութիւնը շարժեր է գործը քննել իմանալու, և իրրեւ արդիւնք իւր տեղեկութեանց, հետեւեալ ծանօթութիւնները կը հաղորդէ մեզ, զորս բաւական հետաքրքրաշարժ կը նկատենք : Միւս կողմէ, պէտք է աւելցնենք թէ նոյն իսկ ֆրանսական թերթեր հաւատ չեն ընծայեր որ Նեստորական հասարակութիւնն ամբողջովին կաթոլիկ ըլլայ, կը կարծուի թէ կարեւոր հատուած մը եւս պիտի կենայ, Մար Շիմունի տեղ ուրիշ Պատրիարք պիտի դնէ, և թէ ոչ ի Ճուլամերկ, դէթ Ամերիա, որոյ շրջակայքն եւս շատ մը Նեստորականք կան բնակեալ, և այսպէս նոր բաժանում մը պիտի մտնէ այս հին ժողովրդեան մէջ : Աւասիկ Արեւելքի նամակագրին տեղեկութիւնները .

«Երկար ժամանակէ ի վեր կը թուի թէ դաղտնի թղթակցութիւն մը կար քաղդեացի Նեստորականաց Պատրիարք (ի Ճուլամերկ) Մար Շիմունի և քաղդեացի կաթոլիկաց Պատրիարք (ի Մուսուլ) Տէր Իլիա միջեւ, թէ քանի որ մէկ ցեղէ են, եկեղեցւոյ մէջ միեւնոյն ծէսերն ունին, երկու հասարակութիւնք միեւնոյն լեզուն կը խօսին, ինչո՞ւ բոլորովին չմիանան : Այս թղթակցութիւնք կերեւի թէ վերջապէս ելք մ՛ունեցած են, և նախնական ծրագիր մը պատրաստուած է սա միտք թէ Մար Շիմուն և իւր ժողովուրդը կաթոլիկ կրօնն ընդունին, Նեստորական Մար Շիմունը միայն իւր հովուապետական աստիճանին մէջ ընդ իշխանութեամբ Տէր Իլիա Պատրիարքի մինչեւ իւր մահը, այնուհետեւ այլ ևս Նեստորականք Պատրիարք չունենան այլ Տէր Իլիան և իւր յաջորդաց կողմանէ կարգուած փոխանորդ հոգեւորական մը, որ Նեստորական հասարակութեան երեւելեաց ժողովի մը հետ կարգադրէ նոյն հասարակութեան գործերը և պատասխանատու լինի Տէր Իլիան և իւր յաջորդաց, ինչպէս այս վերջինք պատասխանատու են Պապին :

«Այս հիմնադիրը երկուց կողմանց հոգեւոր պետերէն և երեւելիներէն ընդունուելէ յետոյ, որոշուեր է տեսակցութիւն մը երկուց Պատրիարքաց մէջ . յաջորդաց սեպտ. 15ին (թուէս երկու օր ետքը,) այդ տեսակցութիւնը տեղի պիտի ունենայ Պէսքափ մէջ որ դիւղ մըն է Մուսուլի և Ճուլամերկի ճիշդ մէջտեղը, և այդ տեղը որոշուած է կարծեմ երկոցունց դիւրազդացութիւնը չոյելու համար, որպէս զի մին միւսին ոտքը գացած չըսուի : Անդ վերջնապէս պիտի որոշուին միութեան պայմանք, զորս Մար Շիմուն վերադարձին պիտի հաղորդէ իւր ժողովրդեան և այնուհետեւ պիտի հրատարակուի միութիւնը :»

ՌՈՒՍՕ-ԹՐԻԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլսէն հոկտ. 20ին Հավատք գործակատարութիւնը կը հեռագրէ փարիզի լրագիրներին հետեւեալը .

Կ. Պոլսի ռուսական դեսպան Պր. Նելիւոֆ ուրբաթ օր Սուլթանին ներկայացաւ և պնդեց որ մի պատասխանատու ռուսական ծանուցագրին : Ներէն կրկնեց Զարին դանդատները Պր. Սթեմպուլօֆի եղած ընդունելութեան նկատմամբ : Դեսպանը Սուլթանի ուշադրութեան ներկայացուց այն հաստատութիւնները որոնք կը գտնուին թիւրք կառավարութենէն իրեն տրուած խոստումներուն և պուլկարներին եղած յայտարարութիւններուն միջեւ որոնք հրատարակուած են պուլկար կառավարութեան կիսազաշտօնական լրագրին Սվոպոտաի մէջ :

Սուլթանը պատասխանեց թէ ինք չէ ուզած վիրաւորել Ռուսիան և թէ ճշդութեամբ կը յարգէ Պերլինի դաշնագիրը : Բայց յայտնեց նաեւ որ Ռուսիան ոչ մի դժուարութիւն չպիտի յարուցանէ թիւրքիոյ դէմ, ի նպաստ Հայերին լինելիք բարենորոգումներէ վերաբերող Պերլինի դաշնագրի 61րդ յօդուածի գործադրութեանը համար :

Դեսպանը պատասխանեց թէ այդ կախուած է թիւրքիոյն ապագայէն մէջ բռնելիք քաղաքական դիրքէն :

Ռուսական ծանուցագրին պատասխանելու համար՝ երբորդ անգամ լինելով մի ծրագիր կը խմբագրուի այժմ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ա. Մ. Բժշկեանց բնակութիւնը փոխադրած է 5 փլաս Ծանթրալ — 5 Place Centrale. Նամակի հասցէն դրել միայն

A. M. Pejishkiantz Marseille

Իսկ հեռագրի հասցէն՝
Pejishkian—Marseille

ԿՐԵՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Կ. Պոլսէն կը հեռագրեն հոկտ. 21 թուով թէ Մանասթըրի յոյն բարձրագոյն վարժարանի (լիսէ) տնօրէնը ձերբակալուեցաւ և իր տուն խուզարկութեամբ բոլոր թուղթերը ղրկուեցան Կ. Պոլիս Եըլտըզի Պալատը։ Յոյն վարժարանի տնօրէնը ամբաստանուած է թէ կրետական շարժման օգնելու համար յեղափոխական ջանքերի մասնակից գտնուած է։

ՁԻԶՈՒԻՏՆԵՐԻ ԳԵՆԵՐԱԼԸ

Անցեալ օրերի, ամբողջ աշխարհի ձիզուիտների ներկայացուցիչները հաւաքուել էին Սպանիայում՝ նոր գեներալ (ընդհանրական աբբայ) ընտրելու համար։ Այս կրօնական ընկերութիւնը, որը չը նայած բազմաթիւ ձախորդութիւնների մինչեւ այժմ պահպանել է իր դիրքը, ունի մօտաւորապէս 13 հազար անդամ, որոնցից 3 հազարը Ֆրանսացիներ են։

Մի քանի տարիների, վարժապետների, քարոզիչների և դիանականների այդ բանակին այս դարի ընթացքում յաջորդաբար տնէր կը լինէին՝ մի Լեհացի, մի Իտալացի, մի Հոլանդացի, մի Բելգիացի և մի Զուիցերիացի։ Այս վերջինը, հայր Անդերլեդի, մեռել է երեք ամիս սրանից առաջ։

Մեռնելուց առաջ նա տեղակալ է նշանակել է մի Սպանիացու, հայր Մարտէնին, որին և գեներալ են ընտրել «Լոյոլա» վանքի մէջ հաւաքուած ութսուն ճիզուիթի պատգամաւորները։

Շատ էլ հեշտ բան չէ հրամայել այս 13 հազար կրօնաւորներին, որոնք ցրուած են ամբողջ աշխարհի վրայ և կատարում են զանազան հանգամանքներում զանազան պաշտօններ։ Ի հարկէ, դժուարութիւնը չէ կայանում այդ կազմակերպած և հոլու շարքերի կառավարելուն մէջ, ո՛չ. կառավարչի գործերը միշտ բարդուած են նրա համար, որ ճիզուիտների ամեն մի անդամ իրաւունք ունի ուղղակի և անձնական յարաբերութեան մէջ մտնելու գեներալի հետ։

Եւ իրաւ, օրէնքը թոյլ է տալիս անմիջական յարաբերութիւնները հրամանատարի և հպատակվողների միջեւ։ Նրանցից ամեն մէկը կարող է ուղարկել իր նկատողութիւնները, իր պահանջները, իր գանգատները գեներալին, փակած և անձնական նամակով, առանց խնայ տալու իր անմիջական մեծաւորին. միջամտել այս տեսակ թղթակցութիւնների մէջ՝ մեծ յանցանք է։

Հայր Մարտէնն այս ընկերութեան հինգերորդ Սպանիացի հրամանատարն է։ Մեսերը համարեա բոլորն իտալացիներ են եղել։ վերջին գարում ճիզուիտները աշխատում են գլխաւոր ընտրել փոքր ազգերին պատկանող անդամներից։ Մինչեւ այժմ Ֆրանսիան չի տուել ոչ մի գեներալ, չը նայած որ Ֆրանսիացի ճիզուիտները ամենից շատ են թուով ընկերութեան մէջ։ Բայց պէտք է խմանալ, որ գեներալի ընտրութեան համար ուղարկած պատգամաւորները համապատասխան չեն իրենց ուղարկողների թիւին։ Ամեն մի նահանգ ուղարկում է 3 պատգամաւոր, ինչքան էլ որ լինի քուէարկողների թիւը։

Աւյսպէս է եղել օրէնքն առաջին օրերից սկսած և մօտաւորէն մինչեւ այժմ պահպանւում է, որովհետեւ Լոյոլայի կազմած ընկերութեան բնաւորող յատկութիւնը՝ անփոփոխութեան մէջ է կայանում։

Ա. Ս.

ՊԱՆՈՒԻՏՈՒՄՆԵՐ

Collection des Historiens Anciens et Modernes

DE L'ARMENIE

Publié en français sous les auspices de
SON EXCELLENCE NUBAR-PACHA
et avec le concours des membres de l'Académie arménienne de Saint-Lazare de Venise et des principaux arménistes français et étrangers, par : **Victor Langlois.**

TOME I. 1re PÉRIODE. — Historiens grecs et syriens traduits anciennement en arménien. (MAR APAS CATINA, Histoire ancienne de l'Arménie. BARDESANE. Œuvres historiques et philosophiques. AGATHANGE, Histoire du règne de Tiridate et de la Prédication de S. Grégoire l'Illuminateur, traduction française accompagnée de la version grecque et latine. FAUSTUS DE BYSANCE, Bibliothèque historique. LÉROUBNA D'EDESSE, Histoire d'Abgar et de la Prédication de Thaddée. ZÉNOPE DE GLAG et son continuateur JEAN MAMIGONIAN, Histoire de Daron. FRAGMENTS D'HISTORIENS GRECS PERDUS conservés dans les œuvres des écrivains arméniens).

TOME II. 1re PÉRIODE. — Historiens arméniens du Ve siècle (GORIUN, Biographie de Mesrob. UN AUTEUR ANONYME DU Ve SIÈCLE. Généalogie de la famille de S. Grégoire, illuminateur de l'Arménie, et Vie de S. Nersès. MOÏSE DE KHORÈNE, Histoire d'Arménie. ELISÉE VARTABED. Histoire de Vartan et de la guerre des Arméniens. LAZARE DE PHARBE, Histoire d'Arménie, EZNIG DE GOGHP, Extrait de la Réfutation des Sectes).

Toutes ces traductions sont accompagnées de notes historiques, critiques et philologiques.
Les 2 volumes (franco)..... 32 fr. »
Chaque vol. sép. » ..... 16 fr. 50

S'adresser aux bureaux de l'*Arménia*.

Le Trésor des Chartes d'Arménie

OU CARTULAIRE

De la Chancellerie Royale des Roupéniens, comprenant tous les documents relatifs aux établissements fondés en Cilicie par les ordres de Chevalerie institués pendant les Croisades et par les Républiques marchandes de l'Italie, etc. Recueillis, mis en ordre et publiés pour la première fois avec une introduction historique par **Victor Langlois.**

Ce livre se compose de deux parties, savoir :
1° Une introduction historique qui facilite l'intelligence des textes du Cartulaire, et présente sous leur vrai jour, les rapports des Franks avec les Arméniens, à l'époque des Guerres-Saintes, l'organisation féodale de la Cilicie, l'administration intérieure du royaume et d'autres questions curieuses à plus d'un titre, et dont la valeur n'avait point encore été reconnue.
2° Un recueil de tous les privilèges, donations, traités de paix, documents officiels et notariés, émanant de la chancellerie des rois de Sis, etc. Prix 16 francs.

S'adresser aux bureaux de l'*Arménia*.

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմենիայի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չի ղրկուիր։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (*Սպառած*)։
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿՆՆՈՒԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (*Պուլղար ազգին իր ազատութիւն ձեռք բերելու համար մէկ դարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է։*) (1 ֆր. 10 *սնթմ.*) 1 ֆր. 50 *սթմ.*

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(*Հայաստանցիների պանդխտութեան տխուր հետեւանքների սէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։*) Գին (90 *սնթմ.*) 1 ֆրանգ 20 *սնթմ.*

Զ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց առարտեղուց (*Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաչունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են*)։ 50 հատը 2 ֆր. և 50 *սանթիմ*, հատը (5 *սնթմ.*) 10 *սանթիմ*։

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (*Սպառած*)

Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (*Թիւրքիայ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներու թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։*) Գին 50 *սանթիմ* (35 *սանթիմ*)։

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ շատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գ էջի 30ի չափ ամփոփուած են Ցուշարարի մէջ որ ութ ածալ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ) (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 *սանթիմ*

Ժ. ՎՐԷԺ (*Պուլկարիայի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի մի. յոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար*)։ (15 *սնթիմ*) ,20 *սնթմ.*

ԺԱ. ԹՈՄԱՍ ԲՈՅԱՐԻՍ (*Ծանաստանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւնները մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ի՛նչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար*), (0,15*սանթիմ*) ,20 *սանթիմ*։

ԾԱԼՈՒ ԴԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը կարելի է ստանալ Արմենիայի խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով որոնց մէջ հաշուուած է և ղրկելու փոստի ծախքը։

Ալէքսանդր Ծատուրեան, Բանաստեղծութիւններ. Մոսկուա 1891. (Ընտիր թղթի վրայ մաքուր տպագրութեամբ կը պարունակէ հեղինակին 102 հատ բանաստեղծութիւնները։ Երես 174)։ Գին 1 ֆր. 75 *ս.*

Հայկակ Լիվնեան, Կակտանք, Տետր Ա. Ն. Երք. 1890 (Հեղինակին ընտիր մէկ բանաստեղծութիւնն է այս արձակ գրուած)։ 30 *սնթմ.*

Հ. Կղեմէս վ. Սիսլեան, Դասագործութիւն Ռուբինեան դրատնոց (Մէկ լուսանկարատիպ պատկերով, վեց վիմատիպ տախտակօք — 79 պատկեր —, և 53 պատկերօք ի բնագրին, որոց մէջ կան բազմաթիւ չհրատարակուած նկարներ։ Մեծ 8° երես Ժ.Չ+88+32). Վիէննա 1892։ Գին 7 ֆրանք։

(*Յանկացողին ձրիապէս կը ղրկուի յառաջաբանն ու ներածութիւնը*)։

Die ARMENISCHE KIRCHE in ihren Beziehungen zur byzantinischen (vom IV. bis zum XIII. Jahrhundert). Von Dr. Arsak Ter-Mikelian. Leipzig. Gustav Fock. 1892. Գին 3 Ֆր.

ՐԱՖՖԻ — *Վէպիկներ և պատկերներ (Տպուած և անտիպ աշխատութիւններից)։ Հատոր Ա.* Գին 7 ֆր.։

ԺՕՐԺ ՍԱՆ — *Գարիբալդիի կեանքը* ,35 *սնթ.*։

ԵՐԶՆԿԵԱՆՑ — *Ազգային երգարան ձայնագրեալ (Հայկական ձայնանիշերով)* 2 ֆր. 80 *սնթմ.*

Խօսք վասն Հայրենասիրութեան Բ *տպագրութիւն* 60 *սնթմ.*։

ՅՈՎՆԱՆԵԱՆ, Մեծն Նարսէս և Հայաստանի վրայ ուղեցաւ ազդեցուղութիւնը 1 ֆր. 10 *սնթմ.*։

ՊԱՐԳԵՒ

«ԱՐՄԷՆԻԱ»Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Արմենիայի ներկայ 8րդ տարեշրջանի սկզբէն մինչեւ վերջ (1892 օգոստոս — 1893 յուլիս) կանոնաւորապէս բաժնորդ լինելով՝ իր բաժնորդագրին կանխիկ վճարողներին համար վճակ պիտի ձգուի և 4 պարգեւ պիտի բաշխուի իրենց։ Անանք որ վեց ամսէ վեց ամիս կամ երեք ամսէ երեք ամիս ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼՈՎ 8րդ տարեշրջանի բաժնորդագրին ճշտած կը լինին ամբողջապէս, նոյնպէս իրաւունք կունենան այդ պարգեւի վիճակախաղին մասնակցելու, իրրեւ ամբողջ տարեկանը կանխիկ վճարածներ։ Այդպէս մաս առ մաս ամբողջ տարեկանը վճարողները իրենց վերջին վճռագրին (1893 փետրուար — 93 յուլիս) կամ վերջին եռամսեայի (1893 մայիս—յուլիս) վճարքին առաջադրին վրայ տպագրուած թուով կը մասնակցին վիճակախաղին։ Անանք որ 8րդ տարեշրջանի տարեկան բաժնորդագինը ամբողջապէս վճարած չեն դեռ վիճակախաղը կատարուելիք ժամանակ, բնականապէս կը ղրկուին պարգեւին մասնակցելու սեւէ իրաւունքէ որովհետեւ իւրաքանչիւր բաժնորդ պէտք է դիտէ թէ իւր ամբողջ տարեկան կամ տարեկանը լրացնող բաժնորդագրութեան առաջադրի թիւը այն 4 թիւերէ մի՛ն է որոնք վերոյիշեալ պարգեւներէ մին շահած կը լինին։

Չորս պարգեւ պիտի բաշխուի ամբողջ բաժնորդներէն 4ին որոնց որ թիւը եղնէ վիճակախաղին կատարուած առեն Առաջին անդամ բաշխած առեն, որ բաժնորդի որ առաջադրի թիւը եղնէ, նա պիտի առանձայ Արմենիայի խմբագիր–անօրէնէն 400 ֆրանք. երկրորդ անգամ բաշխած առեն, եւս առաջադրի թուին տէրը պիտի առանձայ 300 ֆրանք. երրորդինը՝ 200 ֆրանգ և չորրորդինը 100 ֆրանգ։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.
ՄԱՐՍԷՅԼ
Հայերէնի տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, et Papeterie
Allées de Meilhan, 44.